Ջերմօրէն յանձնարարուած պորտուգալական թագաւորի կողմից՝ մի առ ժամանակ ապրում էր Ֆրանսիայում, Իտալիայում ու Գերմանիայում։ Ապա ընկաւ Լեհաստան, ուր շատ շուտով ցոյց տուեց փայլուն յառաջադիմութիւն պետական ծառայութեան ասպարէզում։

Եան Կազիմիր թագաւորը նրան նշանակեց դեսպան Վիեննայում։ Եան Սոբեսկիի գահ բարձրանալուց յետոյ, նա դարձաւ նրա մտերիմ անձերից մէկը։

1677 թ. մասնակցեց Պոլիս ուղարկուած դեսպանութեան։

1678 թ. գնաց Մոսկուա Անդրուսովի հաշտութեան դաշնագիրը վաւերացնելու համար։

1686 թ. գնաց Պարսկաստան ո՛չ միայն իբրեւ Լեհաստանի դեսպան, այլեւ որպէս լիազօր ներկայացուցիչ պապի ու եւրոպական ուրիշ պետութիւնների՝ Թիւրքիայի դէմ ընդհանուր արշաւանք կազմակերպելու նպատակով։

Վերջապէս, 1688 թ. Եան Սոբեսկիի կողմից նորից դեսպան ուղարկուեց Պարսկաստան, ուր եւ վախճանուեց։

1677 թուին, երբ Յակոբ Զուղայեցի կաթուղիկոսը Պոլիս էր, այնտեղ գնաց լեհական մի դեսպանութիւն, որի մէկ անդամն էր Ե՛ւ կոմս Կոստանտին Սուլէյմանը, որը ինչ որ գաղտնի բանակցութիւններ էր վարում Յակոբ կաթուղիկոսի հետ։

Թէ ի՞նչ էր այդ բանակցութիւնների նիւթը, յայտնի չէ. բայց Եան Սոբեսկին խիստ գոհ էր նրանց արդիւնքից, որովհետեւ Նահապետ Ուրհայեցի կաթուղիկոսին ուղղած իր մի թղթում նա հաղորդում էր, որ Յակոբ կաթուղիկոսից իր թղթին ստացած պատասխանը պահում է իր դիւանում, իբրեւ ամենաթանկագին յիշողութիւն։

Ըստ երեւոյթին, բանակցութեան նիւթը միեւնոյն հարցն էր, ինչ որ եւ այն խնդիրը, որի համար յետագայում դիմում էր Նահապետ եւ Եղիազար կաթուղիկոսներին, նոյն կոմս Կոնստանտին Սուլէյմանի միջոցով, այսինքն՝ Հայաստանի անկախութեան վերականգնումը։

Այս վերջինիս մահից յետոյ, 1689 թ., Սոբեսկին նորից վերադարձաւ իր ծրագրին, 1691 թ., երբ դեսպան ուղարկեց Պարսկաստան Սիմոն երէց Պետրոսովիչին, որին տուեց դրաւոր հրահանգներ, որոնք մնացել են մինչեւ օրս եւ զետեղուած են Բարոնչի ուսումնասիրութեան մէջ։ Զատից աւելի հետաքրքրական հրահանգներ են դրանք։ Ես առաջ կը բերեմ գլխաւոր կէտերը միայն։

Եան Սոբեսկին առաջարկում էր հայոց կաթուղիկոսին.

1. Համաձայնութեան գալ հռոմէական եկեղեցու հետ եւ ընդունել հռոմէական հաւատոյ հանգանակը։

2. Լեհ թագաւորի միջոցներով եւ կաթուղիկոսի տնօրինութեան ու վերին հսկողութեան ներքոյ, Մարիամպոլ քաղաքում հիմնել մի վարժարան՝ հայ հոգեւորականութիւն պատրաստելու համար։

3. Սեփական բարեհայեցողութեամբ ցոյց տալ երկու անձնաւորութիւններ՝ մէկին, որպէսզի պապը կարտինալական աստիճան տայ, իսկ միւսին Հռոմէական Սրբազան Կայսրութեան իշխանական տիտղոս շնորհելու համար։

4. Հրաւիրել հայ եպիսկոպոսների ժողով, որին կանչել եւ Լեհաստանի հայ եպիսկոպոսներին, ինչպէս նաեւ աստուածաբաններ Հռոմից՝ միութեան գործը Հռոմի հետ գլուխ բերելու նպատակով։

5. Զանալ, համաձայն Յակոբ կաթուղիկոսի մտքի ու կամքի, վերականգնել հայկական թագաւորութիւնը եւ այդ մասին խնդրել Եւրոպայի քրիստոնեայ պետութիւնների եւ, մանաւանդ, Ֆրանսիայի թագաւորի աջակցութիւնը։ Դրա համար կաթուղիկոսը պէտք է ցոյց տայ այն վայրերը, ուր ամենից աւելի յարմար կերպով կարող են տեղաւորուել քրիստոնեայ պետութեանց զօրքերը, այլեւ ցոյց տալ, թէ ի՞նչ քանակութեամբ զօրք կարող են հանել իրենք հայերը։ Իսկ լեհական թագաւորը, իր հերթին, պարտաւորութիւն է ստանձնում աջակցելու այն քրիստոնեայ թագաւորին, որին հայերը կ՚ընտրեն իրենց թագաւոր։

6. Լեհաստան ուղարկել սուրբ Հռիփսիմէ եւ Գայեանէ կոյսերի մասունքներից կտորներ եւ փոխարէնը ստանալ կտորներ տեղական սուրբերի մասունքներից՝ ի նշան փոխադարձ սիրոյ երկու ժողովուրդների միջեւ։

7. Թոյլ տալ, որ կաթոլիկ քարոզիչները քարոզեն Պոլսի հայոց եկեղեցիներում։